

**5.4. Հիդրոոդերևութաբանական պայմանները Հայաստանում**

**5.4.1. 2012թ. դիտված հիդրոոդերևութաբանական պայմանների համառոտ բնութագիրը:**

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, 2012 թվականը եղել է 10-րդ ամենատաք տարին 1929 թվականից սկսած: 2012թ. ՀՀ տարածքում օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմել է 6.4°C, որը նորմայից (5.5°C) բարձր է 0.9°C-ով: Տեղումների տարեկան քանակը կազմել է 534.9 մմ, որը նորմայից (592 մմ) ցածր է եղել 9.6%-ով:

Ձմռանը միջին սեզոնային ջերմաստիճանը եղել է նորմային մոտ մի փոքր բացասական շեղումներով: Տեղումների քանակը եղել է նորմայի սահմաններում:

Գարնանը միջին սեզոնային ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում: Տեղումների քանակը եղել է նորմայից բարձր 20-30%-ով: Հանրապետություն ողջ տարածքում հաստատված է եղել չոր եղանակային պայմաններ:

Ամռանը միջին սեզոնային ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով, այն եղել է 7-րդ ամենատաք ամառը Հայաստանում 1929 թվականից սկսած: Տեղումների քանակը եղել է նորմայի սահմաններում:

Աշնանը եղանակը եղել է բավականին տաք: Սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին հանրապետությունը հիմնականում գտնվել է հարավային տաք օդային հոսանքների ազդեցության գոտում: Օդի միջին ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 2.1 աստիճանով: Տեղումների քանակը եղել է նորմայից ցածր, նոյեմբերին՝ զգալի ցածր:

Տարվա ընթացքում Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ մուտք գործած ջրի ծավալը կազմել է 77 622 մլն. խոր. մ (ներառյալ ստորերկրյա ներհոսքը): Սևանա լճից ջրի բացթողում կատարվել է հունիսի 3-ից մինչև սեպտեմբերի 28-ը՝ 317 621 մլն. խոր. մ:


Սևանա լճի մակարդակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1 900.13 մ, իսկ 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 1 900.10 մ, որը 2011թ. նույն օրվա համեմատ ցածր է 3 սմ-ով:

**2012թ. ՀՀ-ում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից<sup>1</sup>**


	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Հունվար	-5.0	1.8	32.0	-3.0	91
Փետրվար	-7.9	-2.1	54.4	13.4	133
Մարտ	-4.5	-3.1	36.8	-15.2	71
Ապրիլ	7.1	2.2	36.6	-34.4	52
Մայիս	11.3	1.7	81.7	-6.3	93
Հունիս	15.4	2.0	55.3	-15.7	78
Հուլիս	16.7	-0.4	77.7	33.7	177
Օգոստոս	19.0	2.3	14.2	-18.8	43
Սեպտեմբեր	14.3	1.1	27.3	-0.7	98
Հոկտեմբեր	9.9	2.9	36.1	-13.9	72
Նոյեմբեր	3.7	2.2	22.9	-18.1	56
Դեկտեմբեր	-3.1	0.8	59.7	21.7	157
<b>Միջին տարեկան</b>	<b>6.4</b>	<b>0.9</b>	<b>534.9</b>	<b>-57.1</b>	<b>90</b>

<sup>1</sup> 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ՀՀ-ում, 2012թ.



Տեղումների միջին ամսական քանակը ՀՀ-ում, 2012թ.



2012թ. ք.Երևանում ամսական և տարեկան միջին ջերմաստիճանների և տեղումների քանակների արժեքները և դրանց շեղումները 1961-1990թթ. նորմայից<sup>1</sup>


	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Հունվար	0.5	3.7	13.3	-15.7	46
Փետրվար	-3.7	-2.7	58.8	20.8	155
Մարտ	2.2	-2.9	8.9	-32.1	22
Ապրիլ	14.4	2.8	35.2	-15.8	69
Մայիս	18.6	2.3	20.6	-39.4	34
Հունիս	23.6	3.0	19.9	-9.1	69

<sup>1</sup> 1961-1990թթ. Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպության (ՀՕԿ) կողմից ընդունված ստանդարտ ժամանակահատվածն է, որի միջին արժեքն ընդունվել է որպես նորմա:


5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Միջին ջերմաստիճանը, °C	Միջին ջերմաստիճանի շեղումը 1961-1990թթ. նորմայից, °C	Տեղումների քանակը, մմ	Տեղումների քանակի շեղումը 1961-1990թթ. նորմայից	
				մմ	%
Հուլիս	24.8	0.2	36.6	22.6	261
Օգոստոս	26.9	3.0	-	-9	-
Սեպտեմբեր	22.0	2.2	7	-2	78
Հոկտեմբեր	16.6	3.8	6.1	-25.9	19
Նոյեմբեր	9.8	3.2	9	-21	30
Դեկտեմբեր	1.6	1.1	59.5	33.5	229
<b>Միջին տարեկան</b>	<b>13.1</b>	<b>1.6</b>	<b>274.9</b>	<b>-93.1</b>	<b>75</b>

Օդի միջին ամսական ջերմաստիճանը ք.Երևանում, 2012թ.



Տեղումների միջին ամսական քանակը ք.Երևանում, 2012թ.



**Անբարենպաստ և վտանգավոր օդերևութաբանական երևույթների դեպքերի քանակը, 2012թ.**

*միավոր*

Անբարենպաստ օդերևութաբանական երևույթներ	Վտանգավոր օդերևութաբանական երևույթներ		
Քամի	238	Ուժեղ քամի	17
Մառախուղ	106	Ոժեղ մառախուղ	26
Գետնաբուք	17	Ուժեղ ձյուն	5
Անձրև	17	Ուժեղ անձրև	18
Կարկուտ	44	Ուժեղ կարկուտ	18
<b>Ընդամենը</b>	<b>422</b>	<b>Ընդամենը</b>	<b>84</b>

**5.4.2. 2013թ. հունվար ամսվա հիդրոօդերևութաբանական պայմանները:** Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, հունվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը եղել է նորմայից բարձր 1-3 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայի սահմաններում մի փոքր դրական և բացասական շեղումներով, երկրորդ տասնօրյակում՝ նորմայից ցածր 1-4 աստիճանով, երրորդ տասնօրյակում՝ նորմայից բարձր 2-7 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում կազմել է +9 +12°C, ՀՀ Տավուշի մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +4 +9°C, ՀՀ Լոռու մարզում և Արարատյան դաշտավայրում՝ +2 +7°C, Արագածոտնի նախալեռներում՝ +1 +4°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ -4 +1°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 26-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +17 +20°C, ՀՀ Տավուշի և Լոռու մարզերում՝ +10+15°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ +7 +12°C, Սյունիքի նախալեռներում՝ +7 +11°C, ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում՝ +3 +8°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում կազմել է -7 -12°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -16.6°C), ՀՀ Լոռու մարզում՝ -3 -8°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -4 -7°C, Սյունիքի նախալեռներում՝ -2 -6°C, ՀՀ Տավուշի մարզում՝ 0 -4°C, Սյունիքի հովիտներում՝ -2 +2°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է հունվարի 16-ին: ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի և Շիրակի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռնային շրջաններում գրանցվել է -20 -25°C (Աշոցք գյուղում՝ -33°C, Շորժա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ -11°C), ՀՀ Լոռու մարզում՝ -13 -18°C (ք.Տաշիրում՝ -24°C), Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -10 -15°C (Զվարթնոց թաղամասում՝ -20°C (ՀՀ Արմավիրի մարզ)), ՀՀ Տավուշի մարզում՝ -7 -11°C, Սյունիքի նախալեռներում՝ -4 -9°C (ք. Սիսիանում (ՀՀ Սյունիքի մարզ) -19°C), Սյունիքի հովիտներում՝ -4 -8°C:

Ամսական տեղումների քանակն ամենուրեք եղել է նորմայից բարձր: Արարատյան դաշտավայրում այն կազմել է նորմայի 115-231%-ը, ՀՀ Շիրակի մարզում՝ 157-251%, ՀՀ Կոտայքի մարզում՝ 124-161%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 167-235%, ՀՀ Արագածոտնի մարզում՝

131-197%, ՀՀ Լոռու մարզում՝ 100-355%, ՀՀ Տավուշի մարզում՝ 154-198%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 137-256%:

Հունվարի 8-10-ին և 27-30-ին տարածաշրջանների զգալի մասում, 6-7-ին, 11-ին, 20-21-ին, 23-ին, 25-26-ին և 31-ին առանձին վայրերում դիտվել են տեղումներ:

Հունվարի 5-10-ին, 15-17-ին, 19-25-ին և 27-30-ին առանձին կայաններում դիտվել է մառախուղ 40-500 մ տեսանելիությամբ: Հունվարի 5-8-ին, 10-15-ին և 17-30-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 6-18 մ/վրկ, պռոթկումները՝ 13-26 մ/վրկ:

Հունվարի 31-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3 229 մ) կազմել է 198 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 112 սմ, Աշոցք գյուղում՝ 99 սմ, Որոտան գյուղում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ 77 սմ, ք. Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 75 սմ, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 74 սմ, ք.Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ) և Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 70 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 68 սմ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 63 սմ, Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 48 սմ, Պուշկինի լեռնանցքում (ՀՀ Լոռու մարզ)՝ 33 սմ, ք.Գյումրիում և ք.Արթիկում (ՀՀ Շիրակի մարզ)՝ համապատասխանաբար 31 սմ և 29 սմ, ք.Մարտունիում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 26 սմ, մնացած շրջաններում՝ հիմնականում 3-15 սմ: ՀՀ Տավուշի մարզում, Արարատյան դաշտավայրում և Սյունիքի հովիտներում ձյան ծածկը բացակայել է:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 80-120%-ը, իսկ Արփայի ավազանի գետերում՝ 170-200%:

Սևանա լճի մակարդակը հունվար ամսվա ընթացքում իջել է 1 սմ-ով և հունվարի 31-ի դրությամբ կազմել 1 900.09 մ, որը 2012թ. նույն օրվա համեմատ ցածր է 3 սմ-ով: